


«Ապրիլ 24-ը Պիտի Դառնայ
Հայոց Ցեղասպանության
Ցիշատակման Ազգային Օր»
յայտարարեց Ֆրանսայի
նախագահ Մաքրոն



Կարդալ էջ 3

ՀՅԴ-ն յանձնախույրերու ճամբով
Այլընտրանքային Կառավարութիւն կը ձեւաւորէ



Կարդալ էջ 3

ՀՅԴ Հայաստանի ԳՄ տեսակէտը
ՀՀ կառավարութեան ծրագրի վերաբերեալ



Կարդալ էջ 4

www.horizonweekly.ca

CONNECT WITH US:

 facebook.com/pages/horizonweekly

 @horizonweekly

 horizonweekly

 YouTube – Horizon Weekly TV



2018 PILOT

MSRP STARTING FROM \$40,390*

2018 PILOT SHOWN

*Taxes not included. Visit Honda Gabriel for more details.

HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4

514 327-7777

www.hondagabriel.com

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian



HONDA



MARCHÉ ADONIS

Un univers de fraîcheur

Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé
Place Vertu - DDO - Brossard - Laval - Laval Est - Gatineau
Scarborough - Mississauga

www.groupeadonis.ca /



ՀՅԴ Հայաստանի ԳՄ տեսակետը ՀՀ կառավարութեան 2019-2023 ծրագրի վերաբերեալ

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի մասնագիտական յանձնախմբերը, ուսումնասիրելով ՀՀ կառավարութեան 2019-2023 թթգ ծրագիրը, ներկայացրել են եզրակացութիւններ, որոնք ամփոփելով՝ արձանագրում ենք.

Ընդհանուր գնահատում

1. 2019 թ. Դեկտեմբերի 9–ի արտահերթ խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքում կազմաւորուեց կառավարութիւն՝ Սահմանադրութեան եւ օրէնքի կամայական մօտեցմամբ, ինչը պատճառաբանուեց առաջիկայում իրականացուող կառուցուածքային փոփոխութիւնների մտադրութեամբ, իսկ իրականում առերեսուեցինք մի շարք նախարարութիւնների գործունէութեան չհիմնաւորուած (սպասուելիք) դադարեցմանը։ Յատկանշական է, որ նշուած, ինչպէս նաեւ քաղաքական համակարգը (մամուլի եւ խօսքի ազատութիւն, անմիջական ժողովրդավարութիւն, բնորական համակարգ, սուպերվարչապետութեան ինստիտուտ եւ այլն) բարեփոխելու մասին ծրագրում անդրադարձ չկայ՝ ի հակադրութիւն իշխող ուժի բազմիցս հնչեցրած մօտեցումների։ Մի կողմից անորոշ է նշուած բարեփոխումների հարցը, միւս կողմից՝ փորձ է արւում կառավարութիւնը փոխարինել մէկ անձով՝ գերկենտրոնացնելով կոլեգիալ կառավարման մարմնի լիազօրութիւնները։ Սա երկրի ժողովրդավարական զարգացման ընթացքը խաթարող եւ մեծ ռիսկեր պարունակող իրողութիւն է։

Կառավարութեան ձեւաւորման կամայական մօտեցման վերաբերեալ մեր պնդումը հիմնուած է այն փաստի վրայ, որ կառավարութեան կազմաւորումն իրականացուել է Սահմանադրութեան 150–րդ եւ «Կառավարութեան կառուցուածքի եւ գործունէութեան մասին» ՀՀ օրէնքի 3–րդ յօդուածների խախտմամբ (թէեւ օրէնքի նորմի համաձայն՝ կառավարութիւնը համարւում է կազմաւորուած, երբ նշանակուած է կառավարութեան անդամների 2/3–ը, իսկ նշանակման պահը կարեւոր է, քանի որ, մի կողմից, այն կազմաւորուած չլինելու դէպքում համարւում է, որ վարչապետը հրաժարական է տուել, կազմաւորուած լինելու դէպքում կառավարութիւնը պարտաւոր է 20–օրեայ ժամկէտում ԱԺ ներկայացնել կառավարութեան ծրագիրը)։ Մասնաւորապէս, նշուած յօդուածների համաձայն, վարչապետ նշանակուելուց յետոյ վերջինս պարտաւոր է հնգօրեայ ժամկէտում Նախագահին ներկայացնել կառավարութեան անդամների թեկնածուների նշանակման առաջարկութիւն։ Սակայն անտեսելով տուեալ պահին օրէնքով ամրագրուած կառավարութեան կառուցուածքը՝ վարչապետը ներկայացրեց կառավարութեան անդամների մի մասին նշանակելու առաջարկութիւն՝ դա պատճառաբանելով կառավարութեան կառուցուածքում փոփոխութիւններ իրականացնելու իր մտադրութեամբ։ Հարցն այն է, որ այս քայլը Սահմանադրութեամբ նախատեսուած լիազօրութիւն է (Սահմանադրութեան 6–րդ յօդուածի համաձայն՝ պաշտօնատար անձն իրաւասու է կատարել միայն այնպիսի գործողութիւններ, որոնց համար լիազօրուած է Սահմանադրութեամբ կամ օրէնքով, իսկ օրէնքի որեւէ նորմ վարչապետին չի վերապահել լիազօրութիւն՝ տուեալ ընթացքում ներկայացնել կառավարութեան անդամների մի մասի վերաբերեալ առաջարկութիւն)։

Ինչ վերաբերում է կառավարութեան կառուցուածքի փոփոխութեանը, իսկ իրականում մի շարք նախարարութիւնների գործունէութեան դադարեցման նախաձեռնութեանը, ապա այն չի համապատասխանում հանրային լայն քննարկման, արդիւնաւէտութեան բարձրացման եւ սուպերվարչապետութեան համակարգը վերափոխելու՝ իշխող ուժի նախկինում հնչեցրած մօտեցումներին։ Բացակայում են նաեւ օպտիմալացման անուան տակ իրականացուող կրճատումների սոցիալատնոսական գնահատականները, անտեսւում են կամ չեն կարեւորւում հայաստանեան եւ Սփիւռքի հանրութեան կարծիքները, միւս կողմից՝ նուազեցնելով կառավարութեան անդամների թիւը, առանձին նախարարութեան գործառոյթներ տեղափոխելով վարչապետի աշխատանքով, կառավարութեան կազմում չներառելով ոստիկանութիւնը եւ ազգային անվտանգութեան ծառայութիւնը, փորձ է արւում կառավարութիւնը փոխարինել վարչապետի գերկենտրոնացած ինստիտուտով՝ զրկելով կառավարութեան անդամներին, յատկապէս նախարարներին, Սահմանադրութեամբ եւ օրէնքով նախատեսուած՝ ինքնուրոյն գործելու իրաւասութիւններից։

2. Ձեւաւորուած կառավարութիւնը նպատակադրուել է Հայաստանի Հանրապետութիւնում

իրականացնել «տնտեսական յեղափոխութիւն»։ Ուստի ակնկալւում էր, որ կառավարութեան ծրագիրը պէտք է պատասխաներ, թէ ի՞նչ է ներառում այդ եզրոյթը, ինչպէ՞ս է իրականացուելու «յեղափոխութիւնը», եւ ի՞նչ արդիւնք է այն արձանագրելու։ Կառավարութեան ծրագրում արձանագրուած՝ ՀՆԱ–ի (Համախառն ներքին արդիւնք) տարեկան 5% ակնկալուող աճը բաւարար չէ կառավարութեան տնտեսական քաղաքականութիւնը յեղափոխական կոչելու համար՝ մանաւանդ հաշուի առնելով, որ 2008 թ. Ֆինանսատնտեսական ճգնաժամից յետոյ Հայաստանի տնտեսական աճը միշտ էլ եղել է 5%–ի շրջանակներում։

3. Ծրագրում անդրադարձ չկայ նախընթաց ժամանակաշրջանի, յատկապէս նախորդ կառավարութեան ծրագրով յայտարարուած նպատակների, գերակայութիւնների եւ ձեռնարկուած միջոցառումների կատարմանը։ Սա առաւել արդիական է ներկայումս, երբ, ըստ էութեան, չի փոխուել կառավարութիւն կազմած (2018 թ. Մայիս) քաղաքական ուժը, կառավարութեան ղեկավարն ու անդամների մեծամասնութիւնը, մինչդեռ Սահմանադրութեան 156–րդ յօդուածի համաձայն՝ իւրաքանչիւր տարուայ համար կառավարութիւնը պարտաւոր է Ազգային ժողով ներկայացնել իր ծրագրի կատարման ընթացքի եւ արդիւնքների մասին գեկոյց։

4. Հակառակ կառավարութեան հաշուետուողականութեան եւ պատասխանատուութեան վերաբերեալ իշխող ուժի բազմիցս հնչեցուած մօտեցումների՝ ծրագիրը մշակուել է պատասխանատուութիւնից խուսափելու եւ պարբերաբար հաշուետու չլինելու մօտեցմամբ։ Ծրագրում բացակայում են կոնկրետ թիրախներ, հանրային կեանքի որակի բարելաւումը բնութագրող նպատակադրումներ եւ ժամկէտներ։ Մինչդեռ կառավարութեան ծրագրի սոցիալական, տնտեսական, մշակութային եւ, ի վերջոյ, քաղաքական նշանակութիւնը ոչ միայն երկրի անվտանգ եւ կայուն զարգացմանը հիմնաքարային դերակատարութիւն ունենալն է, որը նոյնպէս բացակայում է, այլեւ այն, որ ծրագիրը պէտք է ունենայ յստակ սահմանադրաիրաւական բովանդակութիւն։ Վերջինս բխում է ինչպէս Սահմանադրութեամբ եւ օրէնքներով ամրագրուած՝ կառավարութեան եւ պետական կառավարման համակարգի կոնկրետ լիազօրութիւններից, պարտականութիւններից, այլ նաեւ ներկայ պայմաններում երկրի առջեւ ծառացած արտաքին ու ներքին մարտահրաւէրներից, հանրութեան կողմից քաղաքականութեան նկատմամբ պահանջներ ներկայացնելու եւ քաղաքական պատասխանատուութեան ենթարկելու բացառիկ իրաւունքից։ Այնպէս է մտածուել, որ հասարակութիւնը գերծ մնայ իր այդ իրաւունքը ժամանակ առ ժամանակ իրականացնելու հնարաւորութիւնից։ Ընդհանրապէս, փորձ է արուել խեղաթիւրել նաեւ կառավարութեան ծրագրի իրաւական նշանակութիւնը, այն ի վերջոյ նորմատիւ իրաւական ակտով հաստատուող, վարքազօի նորմեր պարտադրող փաստաթուղթ է։

5. Կառավարութեան ծրագրում ամրագրուած հիմնական ուղենիշներում առաջնահերթ նպատակ համարելով «Հայաստանի Հանրապետութիւնում բարձր տեխնոլոգիական, արդիւնաբերական, ինչպէս նաեւ բնապահպանական բարձր չափանիշներին համապատասխանող, արտահանմանը միտուած մրցունակ եւ ներառական տնտեսութիւն կառուցելը», դրան հասնելու համար առանցքային նշանակութեան կէտերից մէկը համարուել է Հայաստանի արտաքին եւ ներքին անվտանգութեան ապահովումը, Արցախի անվտանգութեան երաշխաւորումը եւ շարունակական ամրապնդումը։ Սա գլխիվայր շուռ եկած ձեւակերպում է այն առումով, որ առանց Արցախի հարցի լուծման հնարաւոր չէ տնտեսութեան զարգացումը։ Սա հայութեան մեծամասնութեան կողմից բազմիցս մերժուած մօտեցում է։ Աւելին՝ հայ ժողովրդի կենսական շահը կարող է ապահովել «Զարգանալ՝ չգիջելով» սկզբունքի լիարժէք գործադրումը, որի վերաբերեալ ծրագրում պէտք է նախատեսուի համապատասխան դրոյթ, եւ որից պէտք է ածանցուեն ոլորտային բարեփոխումները։

6. Ծրագրում գերիշխում են լոզունգային բնոյթի յայտարարութիւնները, որոնք աւելի շատ յիշեցնում են ցանկութիւններ եւ ամբոխահաճոյ արտայայտութիւններ՝ չներառելով դրանք իրականացնելու կամ դրանց հասնելու մեխանիզմներ կամ առնուազն հիմնական սկզբունքներ։

7. Ծրագիրը պարունակում է ներքին հակասութիւններ ունեցող մտքեր։ Իսկ առանձին դէպքերում ծրագրով յայտարարուած մօտեցումները չեն համապա–

տասխանում գործադրուող քայլերին։ Օրինակ՝ մի կողմից նշւում է տնտեսական «յեղափոխութեան», ծայրանոց աղքատութիւնը վերացնելու, սոցիալական բազմաթիւ խնդիրներ լուծելու կառավարութեան յանձնառութեան մասին, միւս կողմից՝ տնտեսական աճը նախատեսւում է 5%–ի չափով՝ չներկայացնելով տնտեսութեան կառուցուածքային վերափոխման սցենարը եւ այլն։ Այլ օրինակ՝ նշւում է կառավարութեան տարբեր կառոյցների ծրագրային մօտեցումները չափելի արդիւնքներով գնահատելու անհրաժեշտութեան մասին, սակայն նոյն կառավարութեան ծրագիրը, ինչպէս նշուեց վերեւում, չի բաւարարում այդ պահանջին։ Կամ, թէեւ խօսւում է պետական ինստիտուտների գործառոյթների, լիազօրութիւնների, ծախսարդիւնաւէտութեան եւ պատասխանատուութեան համաչափութեան մասին, սակայն նոյն կառավարութեան կառուցուածքային փոփոխութիւններն իրականացւում են առանց այս պահանջները ներկայացնելու։

8. Ծրագրում բացակայում են զարգացման սպառնալիքներն ու խնդիրները, մինչդեռ կարեւոր է կատարել անկախութեան տարիներին երկրի (տնտեսութեան) զարգացման ախտաճանաչում, ինչը հնարաւորութիւն կը տայ վեր հանել հիմնական խնդիրները, արատները եւ մատնանշել դրանց պատճառները։ Վերջիներս թոյլ կը տան գնահատել եւ ըստ առաջնահերթութիւնների ներկայացնել Հայաստանի տնտեսական անվտանգութեան սպառնալիքները։ Օրինակ՝ տնտեսութեան ներկայ կառուցուածքի պայմաններում արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշը հատել է թոյլատրելի սահմանը, ներքին սպառման մէջ ներմուծման տեսակարար կշիւը 50%–ից աւելի է, ինչպէս նաեւ այնպիսի կարեւոր սպառնալիքներ, ինչպիսիք են արտագաղթը, կապիտալի արտահոսքը, վերամշակող արդիւնաբերութեան տեսակարար կշիւը, ՀՆԱ–ի նկատմամբ ներդրումների ծաւալը, գիտական հետազօտութիւններին ուղղուած ծախսերը, գործազրկութեան մակարդակը եւ այլն։ Ուստի կարեւոր է ներկայացնել սպառնալիքների ամենակարեւոր խմբերը եւ դրանց կրճատմանն ուղղուած քայլերը։ Օրինակ՝ սոցիալական սպառնալիք՝ աղքատութիւն, թշուառութիւն (սոցիալական օգնութիւն — կրթութիւն — աշխատանք), ժողովրդագրական սպառնալիք՝ արտագաղթ (մարդկային ռեսուրսների հաշուառում, ինքնագբաղուածութեան խթանում, սոցիալական արդարութեան սկզբունքի կիրառում), ինտելեկտուալ սպառնալիք՝ «ուղեղների արտահոսք», գիտական ներուժի փոշիացում (գիտութեան եւ կրթութեան համակարգի որակական փոփոխութիւններ, գիտութեան նիւթականացում, գիտական գործունէութեան խթաններ)։

9. Ծրագրային հազուադիւտ ցուցանիշները փոխադկապուած չեն։ Մինչդեռ բնակչութեան թուաքանակը քսան տարում հինգ միլիոնից աւելիի հասցնելու նպատակ ունեցող իշխող ուժը, ինչը գնահատուելի է, պէտք է յստակ եւ չափելի ցուցանիշ–ուղենիշներ մշակի։ Ըստ որում՝ դրանք պէտք է միմեանց հետ համաձայնեցուած լինեն։ Օրինակ՝ այդ ցուցանիշն անիրագործելի է տարեկան ընդամենը 5 տոկոս տնտեսական աճի պայմաններում։ Բացի դրանից՝ վերջնանպատակի համար ընտրուած ցուցանիշները պէտք է տրոհուեն ենթացուցանիշների՝ իւրաքանչիւր տարուայ համար։

10. Յստակ չէ, թէ ինչ քայլեր են ձեռնարկուելու արդիւնքային ցուցանիշների վրայ հիմնուած ծրագրային պիւտճէտաւորման անցնելու ուղղութեամբ։ Ծրագրում բացակայում են Սահմանադրութեան 154–րդ յօդուածով ամրագրուած՝ Ֆինանսատնտեսական, վարկային եւ հարկային միասնական (որպէս ամբողջութիւն), պետական պարտքի, ինչպէս նաեւ պետական սեփականութեան կառավարման ոլորտներում կառավարութեան քաղաքականութիւնները։

11. «Արցախի Հանրապետութիւն» պաշտօնական անուան փոխարէն ամէնուր օգտագործուած է «Արցախ» բառը, ինչը չի բնութագրում ինքնիշխան պետութեանը՝ Արցախի Հանրապետութեանը։

12. Հարկ է արձանագրել, որ ամբողջ ծրագրում չի գտնուի որեւէ հաստատում, որ այս կամ այն ուղղութիւնը, ծրագիրը կամ գործողութիւնը ծառայելու է ազգային արժեհամակարգի ձեւաւորմանը, ազգային պետութեան կայացմանը։

13. Հետագայում, յստակ չափորոշիչների վրայ հիմնուած կառավարութեան ծրագիր ունենալու համար, անհրաժեշտ է օրէնքով սահմանել կառավարութեան ծրագրին ներկայացուող պահանջները։

ՀՅԴ Հայաստանի ԳՄ տեսակետը ՀՀ կառավարութեան 2019-2023 ծրագրի «Պաշտպանութիւն եւ անվտանգութիւն» եւ «Արտաքին քաղաքականութիւն» բաժիններու վերաբերեալ

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի մասնագիտական յանձնախմբերը, ուսումնասիրելով ՀՀ կառավարութեան 2019–2023 թթ գ ծրագիրը, ներկայացրել են եզրակացութիւններ:

Պաշտպանութիւն եւ անվտանգութիւն

1. Հնգամեայ ծրագրի պաշտպանական ոլորտի քաղաքականութեան բաժնում, ինչպէս ալլուր, ներկայացուած է են կոնկրետ միջոցառումներ եւ գործողութիւնների ժամկէտներ:

2. Արցախի Հանրապետութեան անվտանգութեան երաշխաւորմանը եւ շարունակական ամրապնդմանը անդրադարձ է կատարուում միայն գործունէութեան հիմնարար ուղենիշներում, սակայն անդրադարձ է կայ ո՛չ կառավարութեան խնդիրներում, ո՛չ էլ պաշտպանական ոլորտի քաղաքականութեան բաժնում: Մինչդեռ, մեր կարծիքով, անհրաժեշտութիւն կար նշելու անվտանգութեան երախաւորի պարտականութիւնների կատարմանը միտուած գործողութիւնները, երաշխաւորման մեխանիզմները կամ դրանց ճանապարհային քարտէզը:

3. Կառավարութիւնը ընդամէնը կարեւորում է զօրահաւաքային նախապատրաստութեան եւ քաղաքացիական պաշտպանութեան ոլորտներում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպութիւնների համաձայնեցուած գործողութիւնները, ինչպէս նաեւ այդ ոլորտներում բլանաւորման եւ վերահսկման մեխանիզմների արդիւնաւէտութեան բարձրացումը, բայց անտեսում է պահեստազօրային պատրաստութիւնը, որը զինուած ուժերի համալրման առանցքային ուղղութիւններից մէկն է: Ի հարկէ, զինուած ուժերը պէտք է ունակ լինեն առկայ ուժերով ու միջոցներով դիմագրաւել հակառակորդի ակրեսիան, բայց զօրքերը արհեստավարժ պահեստազօրայիններով լրահամալրման եւ զօրահամալրման կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը պէտք է համարել առաջնահերթութիւն:

4. Կարեւորուել է միայն քաղաքացիական պաշտպանութեան ոլորտը՝ առանց հաշուի առնելու, որ Հայաստանի Հանրապետութեան վրայ զինուած յարձակման, դրա անմիջական վտանգի առկայութեան դէպքում այդ համակարգը ուղղուած է նաեւ բնակչութեան եւ նրկական արժէքների պաշտպանութեանը կամ պաշտպանութեան նախապատրաստմանը: Սա պետութեան կարեւորագոյն գործառնութիւններից մէկն է եւ ազգային անվտանգութեան բաղկացուցիչ ու անբաժանելի մասը: Մոռացութեան են մատնուած քաղաքացիական պաշտպանութեան հիմնական միջոցառումներից բնակչութեան տարահանման եւ տեղաբաշխման, պատսպարման, անհատական պաշտպանութեան միջոցներով ապահովման կատարելագործմանն ուղղուած գործոն

ղղութիւնները:

5. Անտեսուած է Ազգ-բանակ հայեցակարգը: Նշուած է բնակչութեան եւ ռեսուրսների նկատմամբ անհամաչափ մեծաքանակ զինուած ուժերի պահպանման անհրաժեշտութիւնը, սակայն անտեսուած է ժողովրդական լայն զանգուածների ներգրաւումը պետութեան անվտանգութեան ապահովման եւ պաշտպանութեան կազմակերպման գործում: Դրանով իսկ համակարգը կառուցուել է միայն պարտագիր ժամկէտային եւ պայմանագրային ծառայութեան փոխլրացնող ենթահամակարգերի շարունակական բարելաւման վրայ:

6. Որպէս մեր գլխաւոր մրցակցային առաւելութիւն նշուում են առաքելութեան զգացումով առաջնորդուող մարդիկ, բայց անդրադարձ է կայ, թէ ինչ ուղիներով եւ միջոցներով ենք հասնելու պարտականութեան զգացողութիւնը առաքելութեան զգացումով փոխելուն: Ընդհանրապէս չի կարեւորուում կամաւորականներին եւ աշխարհազօրայիններին պետութեան անվտանգութեան ապահովման գործում ընդգրկելը:

7. Կառավարութիւնը նախատեսում է զարգացնել զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանութեան համակարգը, բայց ծրագիրը չի անդրադառնում զինուորական թուշակառուներին, զինուորական հաշմանդամներին, զոհուած (մահացած), անյայտ կորած զինծառայողների ընտանիքների անդամներին:

8. Սկզբունքային նշանակութիւն ունի ազգային անվտանգութեան նոր ռազմավարութիւն մշակելու հարցը, որի մասին նոյնպէս ծրագրում անդրադարձ է կայ:

Արտաքին քաղաքականութիւն

9. Արտաքին քաղաքականութեան բաժնում գերիշխում են նախորդ իրարալաջող կառավարութիւնների ծրագրերի մօտեցումները: Մինչդեռ անհրաժեշտ են շեշտագրումներ, որոնք բխում են ՀՀ վարչապետի յայտարարութիւններից, «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրից, ինչպէս նաեւ Հայոց ցեղասպանութեան 100–րդ տարելիցի առիթով հրապարակուած համահայկական հռչակագրից (ներքոյ գրեւում շեղատառերով ընդգծուածները, լրացումները կամ փոփոխութիւնների տեսքով, մեր առաջարկներն են կառավարութեան ծրագրի տեքստի վերաբերեալ):

Մասնաւորապէս.

10. Արցախի վերջնական կարգավիճակը եւ անվտանգութեան ապահովումը բանակցային գործընթացում Հայաստանի առաջնահերթ գերակայութիւններն են:

11. Բանակցութիւնների արդիւնաւէտութեան համար էական նշանակութիւն ունի խաղաղութեանը

նպաստող միջոլորտի առկայութիւնը՝ ներառեալ 2016 թ. Վիեննայի եւ Սան Փեթերսպուրկի հանդիպումներում համաձայնեցուած՝ վստահութեան եւ անվտանգութեան միջոցների ամրապնդումը, հակամարտութեան սրման ռիսկերի նուազեցումը, ակրեսիւ հետորաբանութեան բացառումը:

12. Կառավարութիւնը վերահաստատում է, որ Արցախի Հանրապետութիւնը, որպէս հակամարտութեան հիմնական կողմ, պէտք է որոշիչ ձայն եւ ներգրաւուածութիւն ունենայ իրական եւ տեւական խաղաղութեան հաստատմանն ուղղուած բանակցային (ծրագրում օգտագործուում է «հանգուցալուծում» բառը) գործընթացում:

13. Կառավարութիւնն աշակցելու է Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչմանն ու արտաքին քաղաքականութեան իրականացմանը:

14. Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման, դատապարտման եւ հետեւանքների վերացման գործընթացի շարունակականութիւնն ապահովելու ուղղութեամբ ծրագիրը պէտք է ներառի հետեւեալը. «Մարդկութեան դէմ այդ յանցագործութեան ճանաչումը կը նպաստի տարածաշրջանի անվտանգութեանը, կայունութեանը եւ ժողովուրդների միջեւ համերաշխութեանը, ինչպէս նաեւ ոճրագործութիւնների կանխարգելմանը»:

15. Ծրագիրը պէտք է ներառի նաեւ դրոյթ, ըստ որի կառավարութիւնը շարունակելու է աշխատանքները հայ-թուրքական յարաբերութիւնների՝ առանց նախապայմանների կարգաւորման ուղղութեամբ:

16. Ծրագրում «Տարածաշրջանային կայունութեանը միտուած երկխօսութեան ընդլայնումը» դրոյթը չի կարող վերաբերել միայն մէկ պետութեան, այս դէպքում՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներին: Ծրագրով արդէն ամրագրուել են «միջազգային խաղաղութեան եւ անվտանգութեան ապահովման ուղղութեամբ» կառավարութեան քայլերը:

17. Հիմնարար ուղենիշներում, կառավարութեան խնդիրների շարքում՝ մարդկային ներուժի զարգացմանն ուղղուած քայլերի թւում, անհրաժեշտ է յտակեցնել, որ Հայաստանի Հանրապետութեան կառավարման համակարգում ներգրաւելու օրէնսդրական արգելքների վերացումը հիմնականում վերաբերում է ՀՀ երկքաղաքացիներին: Միաժամանակ ՀՀ երկքաղաքացիութիւնը քաջալերելը պիտի լինի Սփիւռքի հետ կապերի առաջնահերթութիւններից:

18. Սփիւռքի ներկայացուցչական կառույցի ստեղծումը չի կարող լինել ՀՀ կառավարութեան նախաձեռնութիւն, դա պէտք է կատարուի հենց Սփիւռքի կողմից: Այստեղ կառավարութեան գերակատարութիւնը պիտի լինի աշակցութիւնը նման նախաձեռնութեան իրականացմանը:

 Aline Shnorhokian Mortgage Advisor Tel: 1 866 231-8876 Fax: 450 688-7555 Cell: 514 797-1375 aline.shnorhokian@cibc.com 	 Groupe Sutton - Performer Inc. 123 Place Frontenac Pointe-Claire, QC H9R 4Z7 ALBERT ARKILANIAN Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker aarkilanian@sutton.com Cell: 514.962.8822 Bur: 514.426.9595 Fax: 514.426.9596 *certaines conditions s'appliquent  Satisfaction garantie ou je revends votre propriété gratuitement!	  VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS GABRIEL Kevork Asadourian Directeur des ventes - usagé Sales Manager - Pre-Owned kasadourian@gabriel.ca 7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4 Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967 www.nissangabriel.com • www.hondagabriel.com
 École De Conduite Driving School Tel: 514-336-1110 Moniteur-Instructeur AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM 1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II	 Personal & Corporate Tax Returns Financial Statements Bookkeeping Business Plan NATALIE SKAFF, CPA, CGA Comptable Professionnelle Agréée Chartered Professional Accountant nat.skaff@gmail.com Tel: (514) 963 3363 2866 Rue De Chamonix Saint-Laurent, Québec H4R 3B7 Services available in Armenian, Arabic, English and French	BRING YOUR OWN WINE  NAZARETH CLASSIC GRILL 550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064 Email: resto.nazareth@hotmail.com
SAMUEL TOPALIAN 450 682-1644 AUTO SAMSON  MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE SERVICE DE PNEUS MISE AU POINT 4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.	  ՀԱՅԿ ԽԱՐՈՒՆԻԱՆ Hayk Hartounian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker C 514.574.6162 B 514.333.3000	 NETTOYEUR MARIE-CLAIRE CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTREAL ET LAVAL) 2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830

Դաշնակցութեան այլընտրանքային ծրագիրը

Ճիշտ է, շատեր յուսախաբ են այսօր կարգալուծ իշխանութեան ծրագիրը։ Յուսախաբ են մանաւանդ անոնք, որոնք «յեղափոխութիւն» կը ծանուցէին, երբ մենք կ'ըսէինք, թէ եղածը ընդամէնը իշխանափոխութիւն էր եւ թէ յեղափոխութիւնը դեռ պիտի գար, եթէ նոր իշխանութիւնը ուզէր բերել զայն։

Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմնի հրապա–րակային ասուլիսով յայտարարուեցաւ, որ չուտով հան–րութեան քննարկման սեղանին կը դրուի Հ.Յ.Դ. սոցի–ալ–տնտեսական ծրագիրը իր համապարփակ ընդգրկու–մով։ Հիմա, որ իշխանութիւնը հրապարակած է իրը – թէկուզ սահմանադրական նորմերու լուրջ խախտում–ներով եւ Դաշնակցութեան այլընտրանքային ծրագրով հանրութեան դատողութեանը կը յանձնուին իրական եզրերը երկրի գարգացման հրամայականներուն։ Այ–սուհետեւ մեր երկրի ժողովրդավարական գործընթացն է, որ պիտի տայ իր արդար գնահատականը։

Ճիշտ է, շատեր յուսախաբ են այսօր կարգալուծ իշխանութեան ծրագիրը։ Յուսախաբ են մանաւանդ անոնք, որոնք «յեղափոխութիւն» կը ծանուցէին, երբ մենք կ'ըսէինք, թէ եղածը ընդամէնը իշխանափոխու–թիւն էր – թէ յեղափոխութիւնը դեռ պիտի գար, եթէ նոր իշխանութիւնը ուզէր բերել զայն... Իսկ իշխանու–թիւնը Պր. Վարչապետին բերնով կը պնդէր, թէ յեղա–փոխութիւնը արդէն աւարտած էր։ Կառավարութեան

ծրագրով 'իշխանութիւնը այժմ կ'ըսէ մեզի, որ յեղափո–խութիւնը պիտի չգայ։ Ան չէր – պիտի չըլլայ իշխա–նութեան նպատակը։ Այս իշխանութեան բնոյթը պէտք է փնտուել իր ծրագրի նորմերուն մէջ։

Հիմա, որ խաղաքարտերը բացուած են, ես կ'ուզեմ ըսել, որ իշխանութեան այս ծրագրո՛վ ալ իշխանու–թիւնը կրնայ շատ բան իրագործել մեր երկրին – մեր ժողովուրդին համար։ Յեղափոխական յաւակնութիւն–ներու կարիք չկայ։ Կարիք չկայ մանաւանդ հանրու–թիւնը յեղափոխական լողունգներով ապակողմնորոշե–լու։ Կարելոր է, որ իշխանութիւնը արագօրէն ամբող–ջացնէ կառավարութեան կազմը եւ անոր մէջ ներառ–ուին լուրջ եւ տաղանդաւոր ուժեր եւ իշխանութիւնը դադրի հանրութիւնը զբաղեցնելէ փուճ եւ աննպատակ խնդիրներով, ինչպէս Ազգային Օրհներգն ու Դրօշը աղաւաղելու տիմար մարզանքներն էին։

Ես վստահ եմ, որ իշխանութեան շարքերուն մէջ այսօր ընթացք առած է իրական գործի խաղաղաշտէն ստրվելու դրական եւ հրամայական գործընթաց մը։ Պէտք է արագացնել այդ կորագծի թափը։ Դաշնակցու–թիւնը յստակ ըրած է սկիզբէն իսկ, որ հոն ուր ճիշտ ուղիի վրայ կը գտնուի կառավարութիւնը, Դաշնակցու–թեան գործակցութիւնը պիտի ըլլայ անվերապահ։ Բայց հոն, ուր խոտորումներ կը գործեն, Դաշնակցութիւնը պիտի գործէ իր ծրագրի յանձնառութեամբ։

Հայաստան-Սփիւռք Յարաբերութիւնների Հոլովոյթը

Մեր մանկապատանեկան տարիներին Հայաստա–նը, խորհրդային երկաթեայ վարագոյրից ներս գտնուե–լու բերումով, մեզ համար, մանկական հեքիաթների նման, համարոււմ էր եօթ սարերի յետեւում անգտանելի մի աշխարհ, որի կարօտը միշտ զգում էինք եւ ճար ու դարման էլ չունէինք մեր կարօտին յագուրդ տալու։ Առաւել մեզ խեղճ էինք զգում, ի տես մեր բնակարան–ներում պատերից կախուած եւ կամ արծաթեայ մի քանի սպասքների վրայ քանդակուած Մայր Հայաստանի պատկերի, տխուր ու տրտում դէմքով, ձեռքը ծնօտին՝ Հայաստանի աւերակների վրայ նստած։

Ձկար կանոնաւոր կապ եւ հաղորդակցութիւն, եր–բեմն էլ մեզ մօտ ապրող հայաստանցիների հարազատ–ներից, գրաքննութեան բովից անցած, նամակները բացի կցկտուր, ոչ ճշգրիտ եւ խիստ հակասական տեղեկու–թիւններից ուրիշ բան չէին փոխանցում. մի խօսքով, ակնդէտ լաւ լուրերի կարօտ էինք։

1943 թուին անանկալ կերպով տեղեկացանք, թէ մեր դպրոցի ճամբի վրայ գտնուող, խմորեղէն վաճա–ռող Սիմոնի խանութի պատուհանից ներս Հայաստանից եկած օրացոյց է փակցուած, մեծ ցնծութեամբ վազեցինք տեսնելու Հայաստանի օրացոյցը եւ խիստ զարմացած՝ ոչ թէ օրացոյց, այլ «Որացոյց» տեսանք, նոյն պահին էլ մեզ մօտ կանգնած տղամարդկանցից մէկը հեզնանքով «Որացոյց»–ի «ք» տառը, «ռ» հնչեցնելով՝ խիստ ծի–ծաղ առաջացրեց եւ մեր ուրախութեան ու ոգեւորու–թեան վրայ էլ պաղ ջուր լցրեց։

Մէկ երկու տարի յետոյ անսահման ցնծութեամբ տեղեկացանք, որ չուտով Հայաստանի դռները բացուե–լու են, եւ բոլոր հայերը պիտի ներգաղթեն հայրենիք, եւ իրականանալու է հայի դարաւոր բաղձանքը՝ հայրենիք վերադառնալու համար։ Նոյն օրերին մեր այս ուրա–խութիւնը բազմապատկեց Հայաստանի երգի ու պարի բազմանդամ պետական անսամպլի ներկայութիւնը մեր քաղաքում։ Մեր Կեդրոնական (այժմ՝ Արմէն) դպրոցի սրահի բեմում նրա ոգեհչնող ելոյթները մեզ երջանկու–թեան եօթներորդ երկինք էին բարձրացնում։

Ներգաղթի առաջին կարաւանը, հրաժեշտի յու–գումներով եւ ողջագուրումներով տեղի ունեցաւ, մենք դարձեալ մնացինք տխուր ու տրտում հայրենակարօտ վիճակում։ Դժբախտաբար ներգաղթի ոգեւորութիւնը մեր մէջ ասորիճանաբար սկսեց մարել՝ ներգաղթողներից զնապաւն միջոցներով մեզ հասած իրենց ոչ այնքան ոււրախ ու նախանձելի վիճակից, ի մասնաւորի շատ էինք տրտում երբ լուրեր էր տարածոււմ որոշ ծանօթ ներգաղթողների, Հայաստանից փախչելու մասին, մտածելով՝ մի՞թէ այնքան վատ է Հայաստանի վիճակը,

որ ցնծազին կերպով ներգաթողը հայրենիքը թողնում ու փախչում է։

Թոյլ եւ ոչ ցանկալի վիճակում էին նաեւ Հայաս–տան–սփիւռք փոխադարձ կապերն ու յարաբերութիւն–ները, որի պատասխանատուն եւ իրականացնողը 1944–64 թուերին «արտասահմանեան երկրների (ոչ սփւււքա–հայերի) հետ բարեկամական ու մշակութային կապի հայկական ընկերութիւն»–ն էր։

Բարեբախտաբար, անձի պաշտամունքի ժամանա–կաշրջանից յետոյ, ստեղծուած աւելի բարենպաստ պայ–մաններում առաւել զարկ ստացան Հայաստան–սփիւռք շփումները, սփիւռքի հայրենակարօտ հայրենակիցների առջեւ լայնօրէն բացուեցին Հայաստանի դռները, սկսուեցին խնդազին փոխադարձ այցելութիւնները, 1964 թուին հիմնուած «Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէ»–ի ջանքերով առաւել կա–նոնաւորուեցին գրքերի եւ հրատարակութիւնների փո–խանակումները, իսկ նոյն կոմիտէի կողմից հրատարա–կուող «Հայրենիքի Ձայն» եւ «Սովետական Հայաս–տան» շաբաթաթերթի ու ամսագրի միջոցով երկրի զա–նազան բնագաւառների մասին յուսադրիչ «խապրիկ–ներ» էինք ստանում, նոյնիսկ 1978 թուականին Խորհր–դային Հայաստանի պաշտօնական հրաւէրով, ի շարս մի քանի երկրներում բնակուող հայրենակիցների, իրանա–հայութեան կողմից եւս մի պատուիրակութիւն մեծ խանդավառութեամբ մասնակցեց Հայաստանում գու–մարուած հայ արուեստին նուիրուած միջազգային սիմ–փոգիումին, ուրախ էինք ու հպարտ՝ ստեղծուած այս իրավիճակից։

1991 թուին անսահման ցնծութեամբ դիմաւորե–ցինք Հայաստանի անկախութիւնը, այն յոյսով որ շատ աւելի բազմակողմ բնոյթով կ'ընդլայնուեն ու կը զար–գանան Հայաստան–սփիւռք յարաբերութիւնները։ Յա–ւօք սրտի, մեր անկախ հայրենիքի նոր իշխանաւորները, փոխարէն սփիւռքի հետ աւելի սերտացնելու կապերը, սփիւռքահայերին անուանեցին «նարինջ ուտողներ» եւ ազգային գաղափարախօսութիւնն էլ կոչեցին «կեղծ կատեղորիա» եւ սկսեցին անմարդկային պայքար Հա–յաստանում նոր վերընձիւղուած, ազգային գաղափա–րախօսութեամբ տողորուած եւ համայն հայութեան մէջ մեծ հեղինակութիւն վայելած կուսակցութեան դէմ, ընդհուպ՝ մինչեւ արգելափակում, գրասենեակների, գոյքերի, դրամների բռնադրաւում, ձերբակալութիւն–ներ ու արտաքսում, կրկին սեւ ամպեր կուտակելով Հա–յաստան–սփիւռք յարաբերութիւնների գլխին։

1998 թուականի իշխանփոխութիւնից յետոյ չեղ–եալ յայտարարուեց կուսակցութեան ապօրինի արգելա–

Կենսական կարեւորութիւն կը ներկայացնէ այսօր այն, որ ՀՀ քաղաքական բեմը սորվի առաւելագոյն արդիւնաւորութեամբ տէր կանգնիլ արտախորհրդարա–նական ընդդիմութեան փաստին։

Ասիկա նոր իրականութիւն է, որուն վերահասու պէտք է ըլլայ մանաւանդ գործադիր իշխանութիւնը։ Մանաւանդ Պրն. Վարչապետը՝ ի՛նք։ Վարչապետ Փա–չինեանի եւ Հ.Յ.Դ. Բիւրոյի հանդիպման առթիւ արտա–յայտուած մտքերը պէտք չէ մոռացութեան տրուին։

Սահմանադրութիւնը կենդանի օրգանիզմ է որեւէ ժողովրդավարութեան մէջ։ Իմաստուն քաղաքական ուժերն են, որ նոր իմաստով կը հարստացնեն սահմա–նադրութեան կեանքը։ Դաշնակցութեան այլընտրան–դային ծրագիրը, ըստ էութեան, հրաւէր մըն է բոլոր քաղաքական ուժերուն մեր երկիրը տանելու դէպի նոր ուժականութիւն, դէպի նոր ինքնալստահութիւն, դէպի նոր լինելիութիւն։ Ան կը ձգտի մեր հաւաքական ուժե–րու միաւորման։ Ան կը ձգտի Հայաստան երկրի լիար–ժէք գերազանցութեան։

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր, Դաշնակցութեան կողմէ, կառուցողական ընդդիմութեան գործընթացը արդէն իսկ ճամբայ ելած է ի ծառայութիւն եւ ի փառս մեր ժողովուրդին։ Բարի երթ բոլորին։ Բոլորին անխտիր եւ Տէր ընդ մեզ։

Կարօ Արմենեան

փակումը, ազատ արձակուեցին անհիմն ամբաստանու–թեամբ ձերբակալուածները, եւ բնականոն հունի մէջ մտան Հայաստան–սփիւռք յարաբերութիւնները, եւ նպատակասլաց հիմնաւորումների ու յստակ ծրագրերի մշակման ու գործադրման համար, սփիւռքի զանազան երկրների հայ համայնքների ներկայացուցչների մաս–նակցութեամբ, կազմակերպուեցին Հայաստան–սփիւռք մի քանի խորհրդաժողովներ, որոնց որոշումների լոյսի ներքոյ կեանքի կոչուեց սփիւռքի նախարարութիւնը։ Նախարարութիւնը «Արի տուն» ազգանուէր ծրագրով կազմակերպեց պատանի–երիտասարդական բազմապիսի հայանպաստ միջոցառումներ՝ հայ մշակոյթը տարածե–լու եւ հային հայ պահելու համար, որոնք մեծ յոյս եւ ոգեւորութիւն ներշնչեցին ցրելով Հայաստան–սփիւռք յարաբերութեանց գլխին կուտակուած սեւ ամպերը։

Այսօր, ցաւօք սրտի, ՀՀ–ի կառավարութիւնը Հա–յաստան–սփիւռք յարաբերութեանց գլուխ հադիսացող սփիւռքի նախարարութիւնը լուծարքի է ենթարկել եւ ցայժմ էլ յստակ որոշում չկայ, թէ հետագային ի՛նչ կա–ռոյց է աշխատելու նրա փոխարէն։

Սփիւռքի նախարարութիւնը ժամանակին կեանքի է կոչուել ոչ թէ քմահաճ կերպով, այլ՝ սփիւռքի համա–պատասխան կառոյցների հետ համախորհուրդ, նպա–տակ ունենալով կրթական եւ մշակութային կապերի մի–ջոցով նպաստել սփիւռքում հայապահպանման վեհ գործին եւ կազմակերպել սփիւռքահայութեան աստի–ճանական եւ ծրագրուած կերպով հայրենադարձութեան այնքան կարեւոր եւ հայրենանպաստ աշխատանքը։ Արդ, եթէ որեւէ փոփոխութիւն պիտի կատարուի այդ բնագաւառում, բնականաբար անհրաժեշտ է ստանալ նաեւ սփիւռքի՝ հէնց նոյն կառոյցների հաւանութիւնը, որոնց խորհուրդով ժամանակին կեանքի է կոչուել նշեալ նախարարութիւնը, հակառակ պարագային, կը նշանակի՝ հայ ժողովրդի աւելի քան երկու երրորդի անտեսում եւ նրա իրաւունքների ոտնահարում։

Յուսանք նորից ու նորից սեւ ամպեր չեն կու–տակուել Հայաստան–սփիւռք յարաբերութեանց վրայ, եւ մեր հայրենի իշխանաւորները գիտակցաբար, սփիւռ–քի հետ խորհրդակցաբար, որեւէ անուան ներքոյ կ'առաջացնեն նախարարութեան համագօր մի ինչ–որ կառոյց, որը կը շարունակի սփիւռքի հետ սկսուած այնքան կարեւոր համագործակցութիւնը՝ ի խնդր հա–յապահպանման եւ հայրենադարձութեան վեհ նպա–տակների։

ԹԱԹՈՒՆ ՕՀԱՆԵԱՆ



Swiss high court rejects opposition to Armenian Genocide Memorial

GENEVA—Switzerland’s highest court has rejected the opposition raised by several Genevans to a recently-unveiled monument commemorating the Armenian Genocide in the city.

The decision published by the Federal Court on February 18 rejected claims by residents that the monument would lead to the area becoming a site of demonstrations, or even conflict between members of the Armenian and Turkish communities.

“Residents can appeal when they are definitely or at least with sufficient probability, affected by the repercussions of such a decision,” the court wrote. This was not the case for the monument in Parc Tremblay, Geneva.

The decision should bring to an end the long saga of the monument, which was unveiled

in April 2018 after a decade of debates and delay.

Not only was it tricky to find an appropriate location for the genocide memorial — initially approved in 2008 — but opposition from Turkey also made the monument a diplomatic headache into which the federal government was forced to wade.

“Les Réverbères de la Mémoire” [Streetlights of memory], designed by French artist Melik Ohanian, is a collection of nine street lamps, each ten metres tall and featuring lamps in the form of teardrops, commemorating the 1915-1917 Armenian genocide, which is still disputed by Turkey.

The genocide was recognized by the parliament of Geneva in 2001 and by the Swiss federal parliament in 2003.

(Swissinfo.ch)

Armenia’s humanitarian mission to Syria upsets U.S.

YEREVAN—Armenia’s Defence Ministry dispatched 83 medics, de-mining experts and other military servicemen to Aleppo, Syria on February 15 on what the ministry called a humanitarian mission to help locals in their efforts to de-mine civilian areas and provide medical assistance.

“The Armenian specialists will carry out humanitarian demining, de-mining training of the population and medical services provision activities in the areas of Aleppo that are free of military operations,” Armenia’s Defence Ministry spokesperson Artsrun Hovhannisyan said.

“The decision on providing professional humanitarian assistance by Armenia to the Syrian people has been made taking into account the current humanitarian crisis in Syria—especially in Aleppo—caused by the military operations, as well as [relevant] UN resolutions, written requests from Syria, as well as the presence of large Armenian community in Aleppo,” the spokesperson elaborated.

On February 19, Defence Minister Davit Tonoyan defended the deployment. During a press conference with his Cypriot counterpart Savvas Angelides, who was visiting Armenia, Tonoyan assured that the mission adheres to the letter of the law. He also added that “necessary” engagement of the group in “hostilities” in Syria would also be carried out “in accordance with the letter of the law.”

Armenia’s latest mission to Syria has upset the United States with the State Department issuing a terse statement that was distributed to the press by the U.S. Embassy in Yerevan on February 13.

“We recognize the desire of other nations to respond to the humanitarian situation in Syria, and we share the con-

cerns about protecting religious minorities in the Middle East,” the U.S. State Department said on Wednesday. “However, we do not support any engagement with Syrian military forces, whether that engagement is to provide assistance to civilians or is military in nature.”

“Nor do we support any cooperation between Armenia and Russia for this mission. Russia has partnered with the Assad regime to slaughter civilians and trigger a humanitarian catastrophe. Russia continues to protect the Assad regime and its atrocities on a global stage,” the statement added.

The mission was deployed to Syria at the same time Tonoyan was meeting in Moscow with his Russian counterpart Sergey Shoygu, who thanked Armenia for the “humanitarian” assistance.

The deployment of military personnel to Syria has become a point of contention for the U.S. as it manoeuvres relations with Russia. Prime Minister Nikol Pashinyan hinted about the mission in September after meeting with President Vladimir Putin of Russia in Moscow. In October, U.S. National Security Advisor John Bolton discussed the issue with Armenia’s leadership when he visited Yerevan. He was given assurances that the mission would not have any combat components.

“We have no such plans,” Pashinyan told Parliament on Wednesday about the possibility of an Armenian combat mission being deployed to Syria.

The current Armenian mission to Syria—not the first—is taking place with the backdrop of President Trump’s announcement of a withdrawal of U.S. forces from Syria and concerns of an increased role by Moscow in the absence of American presence in Syria.

15 years later, Gurgen Margaryan’s murder still roams free in Azerbaijan

OTTAWA — 15 years ago on February 19, Armenian Army lieutenant, Gurgen Margaryan, was brutally axed to death by Azerbaijani lieutenant Ramil Safarov, while both men were participating in a NATO-sponsored course in Hungary. Despite political pressure and continuous calls upon the international community to hold Safarov accountable for his heinous crime, the state of Azerbaijan pardoned him after a short imprisonment, declaring him a hero of the nation. The ANCC condemns the pardoning and rewarding of this convicted killer by the government of Azerbaijan.

Following his murderous act, Safarov subsequently admitted and was convicted by a Hungarian court and sentenced to life in prison for his heinous act. Hungary had consistently refused extradition until August 2012, when it allowed Safarov to return to Azerbaijan, under assurances and promises by Azerbaijani officials that he would serve out his full prison term. However, upon his arrival in Azerbaijan, Safarov was welcomed as a hero, received a full presidential pardon by Azerbaijani President Ilham Aliyev and was promoted to a Major rank in addition to receiving various compensations.

Commenting on the issue, ANCC president, Shahan Mirakian said “Azerbaijan’s blatant par-

doning of such a cold-blooded murderer says enough about the current regime’s attitude towards human rights and international law”.

“Such outrageous behaviour by Azerbaijan raises further concerns towards its compliance to international law, and the Artsakh peace process” said Mirakian.

Since the internationally brokered ceasefire of the Artsakh (Nagorno-Karabagh) conflict, Azerbaijani forces have repeatedly violated the ceasefire regime, targeting ordinary civilians, women and children.

These ongoing violations represent an escalation of the ongoing disregard by Azerbaijan of the efforts of the Organization for Security and Co-operation in Europe (OSCE) Minsk Group, co-chaired by the United States, Russia, and France to solve the conflict peacefully.

The extradition and pardoning of Safarov in 2012 raised concerns in the OSCE Minsk Group’s co-chairmanship countries of United States, Russia and France, (where both the White House and Congressional leaders strongly expressed their concerns regarding Azerbaijan’s actions) and the Canadian Parliament. Despite international calls on Azerbaijan to abide by its promise to the Hungarian authorities and to imprison Safarov, the axe murderer continues to live freely in Baku today.

AYF leads protest condemning Sumgait and Baku pogroms PARTICIPANTS ALSO MARK 15TH ANNIVERSARY OF AXE-MURDER OF GURGEN MARGARYAN

WASHINGTON—Greater Washington DC community members joined the Armenian Youth Federation at the Azerbaijani Embassy on February 17 demanding justice for the Sumgait, Kirovabad, Baku and Maragha pogroms from 1988-1992, and raising their voices in support of freedom and security for the independent Republic of Artsakh.

